ՍՈՎԵՏԱՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՆԳԵՍՈՒՐ, ՆԱԽԻՋԵՎԱՆ, ՂԱՐԱԲԱՂ ՍՏԱԼԻՆ, ՆԱԽԱՁԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՎԻՃԱԿ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Վ. Ի. Լենինը, քաջատեղեակ լինելով Թուրքերի իմպերիալիստական, նուաճողական քաղաքականությանը եւ Անդրբրիալիստական քաղաքականությանը, դեռեւս 1920 թ. Հոկտեմբերի 9ին «Հանրապետության ներքին եւ արտաքին դրության մասին». զեկուցման մէջ ասել է. «Վերջերս Թուրքերը սկսեցին յարձակում Հայաստանի վրայ՝ նպատակ ունենալով դրաւել Պաթումը, իսկ այնուհետեւ, հնարաւոր է եւ Պաքուն»: Հոկտեմբերի 29ին Լենինը Պաքու, Ստալինին է ուղարկում հեռաւեալ բովանդակությամբ հեռագիր. «Անկասկած եմ համաձայն է, որ Վրաստանը Պաթումը կը յանձնի Անթանթին, հաւանական է՝ զգաստի, եւ որ Անթանթը կը գնայ Պաքուի վրայ»: 1921 թ. Դեկտեմբերի 21ին սովետների Տրդ համագումարի պլենարի խմբակի նիստում Վ. Ի. Լենինն ասել է. «Թուրքական յարձակումը (Հայաստանի վրայ – հեղ.) մեր դէմ էր ուղղուած, Անթանթը մեզ համար փոս էր փորում եւ ինքն էլ ընկաւ այնտեղ, որովհետեւ մենք ձեռք բերեցինք Սովետական Հայաստան: Թուրքիան զինվորագրում են էսէրները, հոկտեմբերեանները, պաշտպանները, որոնք պատրաստ են մեզ ծախել Անթանթին»:

Այստեղից պարզ երեւում է, որ Լենինը Թուրքիայի դէմ Անթանթի կողմից սանձազերծուելիք պատերազմի առաջատար ուժը համարում էր Թուրքիան: Բայց չնայած դրան, Լենինը չարունակում էր մնալ Լենինին հակառակ դիրքերում, կենտրոնացնելով Թուրքական քաղաքականությունը, որը խոմին հակասում էր Սովետական Ռուսաստանի շահերին:

«Ճանուն համաշխարհային յեղափոխության» լայնանակի հայկական հողերը Թուրքիային զոհաբերելու Ստալինի դաղափարը հայկական հանրապետության իմպերիալիստական բնոյթի մասին նրա տեսակէտները սկսում են ուժգնօրէն փրոփականտել նրա մտերիմները, ենթակաները եւ Ազգությունների գործերի ժողկոմատի գործունէության հետ առնչուող կազմակերպությունները:

1920 թ. Սեպտեմբերին Պաքուում գումարուում է Արեւելքի ժողովուրդների առաջին համագումարը, որտեղ Թուրքական տարրերը գերակշռում էին: Համագումարի նախագահությունը, քննութեան առնելով Մերձաւոր Արեւելքում ստեղծուած ռազմաքաղաքական կացությունը եւ ելնելով Ստալինի հակահայկական, փրոթուրքական քաղաքական սկզբունքներից, արձանագրում է, որ Թուրքիայում ազգային-յեղափոխական շարժումը վայրէջք է ապրում: Ելնելով դրանից, համագումարը որոշում է. ա) ամէն գնով, նոյնիսկ ամենաարտակարգ միջոցներով աջակցել Թուրքիայի մարող ազգային շարժման վերելքին, բ) դրան հասնել «Թուրքական զօրքերը Հայաստանի վրայ յարձակուելու եւ դաշնակների լուծը տապալելու դրօշով»:

Հայաստանի ջախջախումը Թուրքերի կողմից, այդ որոշման հեղինակների կարծիքով. ա) հարաւորութիւն կը տար Թուրքական 15րդ զօրարանակը հանել երկրի արեւելեան սահմաններից, բ) կը բարձրացնէր Քեմալի հեղինակութիւնը եւ թոյլ չէր տայ մարելու Թուրքական ազգային շարժումը:

Այսպիսով, ինչպէս տեսնում ենք, Ստալինի փրոթուրքական, հակահայկական հոդուածը սկսում է մեզ ու արիւն ստանալ եւ դառնալ Ազգությունների գործերի ժողկոմատի պաշտօնական քաղաքական դիրք: Այդ քաղաքականության համաձայն անհրաժեշտ էր Թուրքիային Թոյլ տալ յարձակուելու Թոյլ ու քայքայուած, արեւով ոգեշուած Հայաստանի վրայ եւ հեշտ յաղթանակների գնով թարմ արիւն ներարկել մարող ազգային շարժմանը, աջակցել դրա վերելքին: Ազգային հարցի «խաղը տեսարան» Ստալինը, յանուն Թուրքիայի ազգային շարժման յետագայ վերելքի, զոհաբերում էր Արեւելեան Հայաստանը: Վերջիւեալ որոշումը ընդունուեց՝ 1920 թ. Սեպտեմբերի 17ին, իսկ 21ին Թուրքերը սկսեցին իրենց յարձակումը Հայաստանի վրայ:

Ստալինը իր Թուրքասիրական քաղաքականությունը շարունակում է նաեւ յետագայում, յատկապէս 1921 թ. առաջին կէսին: Այդ տարուայ Փետրուարի 9ին Օրջոնիկիձէն Պաքուից հեռագրում է Լենինին այն մասին, որ Թուրքական պատուիրակութիւնը Փետրուարի 6ին Պաքուից ճանապարհուել է Մոսկուա եւ, որ «անհրաժեշտ է որքան կարելի է շուտ պայմանագիրը կնքել, որովհետեւ Մուշը, Վանը եւ Պիթլիսը Հայաստանին տալու մասին Զիչերինի պահանջը Մուսթաֆա Քեմալին կարող է հարկադրել ուղիներ որոնել Անթանթի հետ մերձենալու համար»: Այդ պատճառով էլ, չարունակում էր նա, «բոլոր նման բնոյթի պահանջներից պէտք է հրաժարուել եւ պէտք է պայմանագիրը կնքուի»:

1921 թ. Փետրուարի 10ին նոյնանման նամակով Վ. Ի. Լենինին է դիմում նաեւ Ն. Նարիմանովը, որտեղ նա արծարծում է Թուրքիայի հետ վարուող բանակցությունների եւ հայկական հարցի հետ առնչուող մի քանի հարցեր: Այդ նամակում Նարիմանովը քննադատում է Զիչերինին՝ Վանը, Մուշը եւ Պիթլիսը պահանջելու համար եւ գտնում է, որ այդ հողերը անպայման պէտք է դիմել Թուրքիային: Լենինը այդ նամակը ուղարկում է Ստալինին՝ առաջարկելով ներայայնել համաձայն կարծիքը: Սակայն, ինչպէս նշեցինք, Ստալինը այդ հարցի մասին իր կարծիքը Լենինին էր ուղարկել դեռեւս Փետրուարի 12ին:

Ստալինի փրոթուրքական տեսակէտը, բնականաբար, դրուեց նրա կողմից զեկավարուող Ազգությունների գործերի կոմիսարիատի պաշտօնական քաղաքականության հիմքում: Կոմիսարիատի պաշտօնական թերթը չուտով դարձաւ ստալինեան հակահայկական համոզումի հեռուստան փրոփականտիստը: 1921 թ. Մարտի 4ին այդ թերթում տպագրուեց կոմիսարիատի պատասխանատու աշխատող Ա. Սկաչկոյի «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկայ համագումարներում» խորագրով յօդուածը, որտեղ հեղինակը գրում էր, որ Սովետական Հայաստանը յանուն համաշխարհային յեղափոխության «պէտք է հրաժարուի ոչ միայն Ծոփից եւ Հայաստանի մասին դաշնակցական իմպերիալիստական մտադրութիւններից, այլեւ նոյնիսկ հայկական անուանուող հողերը միացնելու համեստ ցանկութիւնից: Այսպէս, նա պէտք է հրաժարուի Վանի, Պիթլիսի վերադարձնելու պահանջներից, քանի որ ներկայ պահին պահանջները պէտք է անհիմն համարել... Հայաստանը պէտք է հրաժարուի ոչ միայն այն հողերից, որոնք նա պահանջում է, այլեւ նոյնիսկ նրանցից, որոնք արդէն մտել են անկախ Հայաստանի կազմի մէջ: Կարսի եւ Արտահանի մարզերը չպէտք է կազմեն ուժեղագոյն դառնան Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Հայկական կառավարութեան կողմից այդ հողերի զրաւումը պէտք է դիտել որպէս իմպերիալիստական աքթ, քանի որ այդ հողերում բնակչութեան 67 տոկոսը կազմում են մուսուլմանները»: Երբորդ նման յօդուածը լոյս տեսաւ Թերթի խմբագիր Ի. Տրոցկուն նիստի ստորագրութեամբ, 1921 թ. Մարտի 7ի համարում՝ «Ազգերի կու համագումար» վերնագրով: Այդ յօդուածում եւս հայ ազգին զգուշացնում էր արուում յանուն համաշխարհային յեղափոխության Թուրքիային:

Այսպիսով, Սովետական Ռուսաստանի Ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը պահանջում էր սովետական կարգացուցիչ մաս կազմող Հայաստանի Սովետական Հանրապետության շահերը զոհաբերել քեմալական Թուրքիային, որ ինչպէս նշում էր Վ. Ի. Լենինը, արդէն կապուել էր Անթանթի հետ եւ Անդրկովկասում վարում էր իմպերիալիստական, նուաճողական քաղաքականություն:

1921 թ. Փետրուար-Մարտ ամիսներին Մոսկուայում բարեկամության պայմանագիր կնքելու համար տեղի ունեցող սովետա-Թուրքական բանակցությունները, որի ժամանակ Ստալինը ծաւալեց չափազանց գործօն դիրքային գործունէություն եւ կարողացաւ փաստորէն չէզոքացնել Զիչերինին, անցկացնելով իր հակահայկական քաղաքական դիրքը: Ստալինն այդ ժամանակ իր ձեռքում էր կենտրոնացրել անսահմանափակ իշխանություն եւ մեծագոյն շարաշահում էր Լենինի վստահությունը:

Ահա թէ ինչ են պատմում Թուրքական ազգիրները սովետա-Թուրքական բանակցությունների ընթացքում Ստալինի բանակցիչի դերի մասին:

Թուրքական պատուիրակության անդամ, Մոսկուայում Թուրքիայի առաջին դեսպան Զորավար Ալի Ֆուատ Ճեղեսոյը իր յուշերում, գրում է. «Զիչերինը չէր ցանկանում սահմանները հարցերը լուծել յօգուտ Թուրքիայի եւ միայն Ստալինի միջամտությունը հնարաւոր եղաւ լուծել այդ հարցերը, որոնք բանակցությունները փակուելու մէջ էին մտցրել»: 1955ին հրատարակուած «Մոսկովեան յուշեր» խորագրով գրքում նա նշում է. «Զիչերինը կրկնեց, որ անհրաժեշտ է հայերին տեղեկացնել, որ Վանի եւ Պիթլիսի վիլայէթներում, որ Թուրքիան զրաւել է, օգնութիւն ցոյց տալու հարցը կախուած է դրանից, որ Հայաստանին տրուած տարածքում հայերի վերարնակեցում պէտք է կատարուի»: Այնուհետեւ նա չարունակում է. «Մեր համաձայնությունը Զիչերինի հետ կայացաւ Ստալինի միջամտությունից հնարհիւ: Բանակցությունների ընթացքում ծառացած դժուարությունները եւս յաղթահարուեցին հնարհիւ նրա միջամտության: Ճեղեսոյի գրքի մի բաժինը վերնագրուած է. «Ստալինը եւ հայկական հարց»: Այդ բաժնում հեղինակը պատմում է, թէ ինչպէս 1921 թ. Փետրուարի 22ի լոյս 23ին Թուրքական պատուիրակությունը հանդիպում է ունեցել Ստալինի հետ: Պատուիրակությունը անդամները Ստալինին հարցնում են, թէ «արդեօ՞ք համաձայնուում քննարկուելու է հայկական հարցը»: Սա պատասխանում է, որ «հայկական հարցը դուք արդէն լուծել էք, եթէ ձեզ մտ գրաւ չլուծուած ինչ որ բան է մնացել, ապա դա էլ լուծեցէք»: Պատուիրակության անդամներ Թեւֆիկ Պէյրքլիոգլին, յենուելով Թուրքական պատուիրակության զեկավար Եուսուֆ Քեմալի հետ ունեցած զրոյցի մասին վանդակութեան վրայ, 1959 թ. հրատարակուած իր «Աթաթուրքի Ազատության (1919–1921 թթ.)» գրքում գրում է. «1921 թ. Փետրուարի 22ին Ստալինի հետ ունեցած առաջին հանդիպման ժամանակ նա մեզ առաջարկեց զէնք, դրամ եւ զօրք: Ինչ վերաբերում է հայկական հարցին,– ասաց նա,– ապա դուք այն արդէն լուծել էք»:

1921 թ. սովետա-Թուրքական բանակցությունների ընթացքում Ստալինի բռնած դիրքը այդպէս են բնութագրում այդ ժամանակաշրջանի պատմութեամբ զբաղուող Թուրքական բոլոր պատմաբանները:

Ազգային հարցի «խաղը տեսարան», Կոմունիստական կուսակցության Կենտկոմի քաղաքականության անդամ, Ազգությունների գործերի ժողկոմը սինկիզբէն Թուրքական պատուիրակությանը հաւատացնում էր, որ 1.5 միլիոն հայերի ոչնչացումը արդէն լուծուել է հայկական հարցը եւ խորհուրդ էր տալիս, որ եթէ Թուրքիայի ինչ որ շրջաններում դեռ մնացել է հայ հոգի, ապա դրան էլ պէտք է ոչնչացնել:

Հայ ժողովուրդը դարձաւ Ստալինի առաջին զոհը, որի յետագայում հետեւեցին նաեւ ուրիշ ժողովուրդներ եւ միլիոնաւոր սովետական քաղաքացիներ, մի ահաւոր եղեռնագործություն, որի մասին հրատարակությունների եւ դեմոկրատիայի պայմաններում հանգամանքներին խօսում է սովետական մամուլը:

ԼԵՆԵՐՈՒԵ ԽՈՒՐՇՈՒԴԻՆ
Պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

(Շար. 3 եւ վերջը յաջորդով)

Հ. Բ. Ը. Մ. – Հ. Ե. Ը. ՀԱՅ ՀԱՄԱԼՍ. ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱԿՈՒՄԲԻ ՕՐ

Տեղի կ'ունենայ Զորեշաբթի, 6 Յուլիս 1988, երեկոյեան ժամը 8ին սկսեալ, Հ. Ե. Ը.ի Անդրանիկ – Սեւան ակումբի մէջ Զ. Մովսէսեան կեդրոն:

Հաճելի անակնկալներ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ